ՀՀ ԵՎ ԼՂՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

Լիլիյա Ասրյան

20-րդ դարի 90-ական թվականները դարձան հասարակական զարգացման կտրուկ առաջընթացի ժամանակաշրջան, և միանգամայն օրինաչափ է, որ հատկապես այդ շրջանում զարգացած ու զարգացող շատ երկրներում առաջացավ հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների կենսականորեն պարտադիր անհրաժեշտություն: Նշված և հետագա ժամանակներում աշխարհում կատարվող արմատական փոփոխությունները պահանջում էին նաև, որ բարձրագույն կրթական համակարգը անմիջապես արձագանքի ընթացքի մեջ գտնվող գործընթացների պահանջներին: Հայտնի է, որ Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթական ոլորտը վերջին տարիներին գտնվում է անընդհատ վերափոխումների ընթացքում՝ պայմանավորված Հայաստանի անդամակցությամբ Բոլոնիայի գործընթացին, որի նպատակն է ստեղծել այնպիսի միասնական կրթական գիտական տարածք, որտեղ մասնակից երկրների ուսումնական հաստատությունների կողմից ապահովող կրթությունը լինի համադրելի և գնահատվի համընդունված չափանիշներով: Բոլոնիայի հռչակագրով՝ անդամ երկրները, այդ թվում՝ Հայաստանը, պարտավորվեցին այնպես համակարգել իրենց քաղաքականությունը, որ մոտ ապագայում հասնեն իրենց առջև դրված նպատակներին, որոնք առաջնային են բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ստեղծման և ամբողջ աշխարհում եվրոպական բարձրագույն կրթական համակարգի տարածման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ հարկ է նշել, որ գիտատեխնիկական հեղափոխության ներկա ժամանակներում զարգացումներն անխուսափելի են՝ պայմանավորված գլոբալիզացիայի պահանջով: Նորագույն տեխնոլոգիաների զարգացումները բերում են նրան, որ կյանքի յուրաքանչյուր բնագավառում ի հայտ են գալիս նորարարության մեծ պահանջ: Այս բոլորից, իհարկե, անմասն չի կարող մնալ կրթությունը, մասնավորապես, բարձրագույն կրթությունը:

Գլոբալացումը հարուցում է մի շարք հիմնային հարցեր, որոնք անմիջականորեն վերաբերում են նաև բարձրագույն կրթությանը: Յուրաքանչյուր երկրի համար կարևոր բնագավառ է բարձրագույն կրթության ոլորտը, որը պետության սոցիալ-տնտեսական բանիմաց հասարակության, ուսանողների և շրջանավարտների ապագան կանխորոշելու և ռազմավարական զարգացման երաշխիքն է: Յուրաքանչյուր պետության գերխնդիրն է ունենալ ամուր կրթական համակարգ, որը հենասյունային դեր է խաղում պետության զարգացման գործում: Այս ընդհանուր նպատակներից ելնելով՝ Եվրոպան միավորվեց [1] մեկ գաղափարի շուրջ և ստեղծեց եվրոպական կրթական համակարգ, որը կապահովի ավելի մատչելիություն և շարժունություն եվրոպական կրթական հա-

---

* Հոդվածն ընդունվել է 26.03.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

մակարգում: Զարգացումներն անհրաժեշտաբար պահանջում էին համապատասխան միջոցառումներ:

Բարձրագույն կրթությունը՝ որպես տնտեսության զարգացման հիմնարար բաղադրիչ, զգալի ուշադրության է արժանացել Եվրամիության անդամ երկրների կառավարությունների կողմից: Արդեն նշված երկրները եվրոպական բարձրագույն կրթությունն առավել մրցունակ ու աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան դարձնելու ուղղությամբ զգալի ներդրումներ ու մեծածավալ աշխատանքներ են կատարում: Բոլոնիայի հռչակագիրը և նրան հաջորդող Պրագայի 2001, Բեռլինի 2002, Բերգենի 2005 թվականների կոմյունիկները՝ բոլորն էլ համաեվրոպական բնույթ են կրում: Այս միջոցառումներն ամբողջովին նպատակաուղղված են եվրոպական բարձրագույն կրթության որակի բարձրացմանը, համաշխարհայնացմանն ու մրցունակությանը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի անդամագրումը իրոք որ կարելի է անվանել պատմական հեղաշրջում: Հետխորհրդային տարիներից հետո Հայաստանի և Արցախի կրթական համակարգն այնքան էր խարխլվել, որ այս փոփոխությունը պարզապես անհրաժեշտ էր: Այն լայն հնարավորություններ է ընձեռում մի կողմից՝ բարեփոխելու հայկական կրթական համակարգը՝ դարձնելով այն ճանաչելի և համադրելի եվրոպական համակարգերի հետ, մյուս կողմից, Բոլոնիայի սկզբունքներն ընդունելով, Հայաստանն առավել պատասխանատու է դառնում համաշխարհային շուկայի փոփոխվող պահանջներին, զարգացնում մրցունակությունը, շրջանավարտների արտաքին գրավչությունը և զբաղվունակությունը, որը կայուն, գիտելիքահենք հասարակության և նորարար տնտեսության գրավականն է:

Հայաստանը քաղաքական, տնտեսական ու աշխարհագրական առումով ունի իր առանձնահատկությունները, որոնք իրենց ուղղակի ազդեցություններն ունեն բարձրագույն կրթության համակարգի գործունեության վրա: Բոլոնիայի համաձայնագրի ստորագրումը Հայաստանում պայմանավորված է, առաջին հերթին, պետական ռազմավարական մոտեցումներով, որոնք պահանջում էին կրթության կառավարման համակարգի ժողովրդավարացում, կրթության բովանդակության անընդհատ կատարելագործում միջազգային կրթական չափորոշիչներին համապատասխանելու և գիտակրթական հաստատությունների միասնական ցանցում աստիճանաբար ինտեգրվելու նպատակով: Սա շատ կարևոր է, քանի որ հիմնվելով ժողովրդի կրթության բարձր մակարդակի, մարդկային կապիտալի որակի վրա՝ Հայաստանը կկարողանա գրավել իր ուրույն և կայուն տեղն ու դիրքը այնպիսի երկրների շարքում, որոնք այսօր մեծ ազդեցություն ունեն համաշխարհային գործընթացներում: Բարձրագույն կրթությունը պետք է օգնի Հայաստանին և Արցախին՝ միասնական կրթադաշտում դիմակայելու և պատասխան տալու այն բոլոր խնդիրներին և մարտահրավերներին, որոնք այսօր ի հայտ են գալիս երկրի տնտեսական և սոցիալական ոլորտներում, ինչպես նաև արտաքին աշխարհում:

Առկա աշխատությունների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա փորձենք վերոնշյալ հիմնարար ըմբռնումների համատեքստում դիտարկել Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթության համակարգերի փոխակերպման գործընթացը կրթության ոլորտի բարեփոխումների շրջափուլերում (1991-2014թթ.):

Հիմնախնդրի վերաբերյալ փաստագրական նյութերի ուսումնասիրումը ցույց տվեց, որ Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության նոր վերափոխումների գործընթացը սկսվել էր 1990 թվականի հուլիսին՝ կրթության նախարարության Ազգային միասնական հանրակրթական և բարձրագույն դպրոցի մասին ընդունված որոշ-

մամբ: Սակայն անցումային շրջանի համար նախատեսվող ռազմավարության իրականացումը հանդիպեց լուրջ խոչընդոտների՝ կրթությանն առնչվող օրենսդրական դաշտի բացակայություն, կրթության կառավարման համակարգի միմյանց հաջորդող փոփոխություններ և այլն: Անցումային փուլում ի հայտ եկան նաև այնպիսի գործոններ, որոնք նույնպես դանդաղեցրին և խոչընդոտեցին համակարգի բարեփոխումը և առաջընթաց զարգացումը: Դրանցից հիմնականն էր 1988-ի երկրաշարժը, որի պատճառով ավերվեց Հանրապետության տարածքի ավելի քան 40 տոկոսը, և ավելի քան կես միլիոն մարդ մնաց անօթևան: Դրությունն ավելի վատացավ Ղարաբաղյան հակամարտության պատճառով: Շուրջ 300 հազարից [2] ավելի փախստականներ բռնագաղթվեցին Մայր Հայաստան: Երկրաշարժի հետևանքով ամբողջությամբ կամ մասամբ վնասվեցին 277 դպրոցական և 245 նախադպրոցական հիմնարկների շենքեր, ինչպես նաև տասնյակից ավելի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնաշենքեր [3]: Նման իրավիճակ էր ստեղծվել նաև Լեռնային Ղարաբաղում: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1990-1994 թվականներին ազերիների կողմից ավերվեցին 90-ից ավելի դպրոցական, նախադպրոցական հիմնարկների շենքեր, մեկ տասնյակ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաշենքեր [4]: Այդ ամենի հետևանքով զգալիորեն նվազեց ողջ կրթական համակարգի նյութական և տեխնիկական հագեցվածությունը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ անցումային փուլում Հայաստանում, ինչպես նաև Արցախում, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների իրականացումը դեռևս խոչընդոտում էին մի շարք խնդիրների առկայությունը: Այսպես, օրինակ, բարեփոխումների իրականացմանը արգելակող հիմնական պատճառներից էին պետության ֆինանսական դժվարությունները, որոնք թույլ չէին տալիս անհրաժեշտ ներդրումներ կատարել նոր ուսումնածրագրային նյութերի մշակման, հաստատություններն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցնելու, դասավանդման գործընթացում առավել որակյալ մասնագետներ ներգրավելու, գործող մասնագետների վերապատրաստման համար: Նշված նախադրյալների վերլուծությունը հիմք է տալիս ասելու, որ բարձրագույն կրթության բարեփոխումների կարիք ունեցող առանցքային ուղղություններից մեկը բարձրագույն կրթության ֆինանսավորման խնդիրն էր: Նշված ժամանակահատվածում Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման մակարդակը բավական ցածր էր: Ի դեպ, նշենք, որ այդ շրջանում Արցախը, գտնվելով տնտեսապես անբարենպաստ պայմաններում, կրթական համակարգը ֆինանսավորվում էր Հայաստանի պետական բյուջեից: Ներկայումս պետական բյուջեից բուհերին հատկացվող ֆինանսավորումը կազմում է վերջիններիս եկամտի մոտ 21%-ը: Պետական բուհերում ուսանողական վարձավճարները բավականին բարձր են [5]՝ հասնելով մեկ շնչին ընկնող եկամտի շուրջ 20% (համեմատության համար, օրինակ, ԱՄՆ-ում կամ Ճապոնիայում այն հասնում է եկամտի 11%-ը) [6]: Վճարների հատուցման հիմնական ծանրաբեռնվածությունը բաժին է ընկնում ուսանողների ծնողներին, ինչն ուսումնառության ընթացքում լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է ստեղծում ուսանողների և նրանց ընտանիքների համար և լուրջ խնդիրներ է առաջացնում բարձրագույն կրթության տեսանկյունից:

Ինչպես ցույց են տալիս այդ ուղղությամբ կատարած հետազոտությունները [7], ներկայիս Հայաստանի և Արցախի բուհական համակարգերի ֆինանսավորման սկզբունքներում առկա են մի շարք թերություններ, որոնք լուրջ խնդիրներ են առաջացնում բարձրագույն կրթության մատչելիության և հավասարության տեսանկյունից: Մասնավորապես մասնագիտական չափաքանակների սահմանման և հատկացման

սկզբունքներն ամբողջական չեն արտացոլում Հայաստանի և Արցախի տնտեսության զարգացման գերակա ուղղությունների գծով աշխատաշուկայի իրական պահանջարկը և ռազմավարական [8] նշանակություն ունեցող պետական ծրագրերով պայմանավորված առաջիկա տարիների մասնագետների պատրաստման պահանջարկը:

Ելնելով վերոհիշյալից՝ ընդգծենք, որ ուսանողական նպաստների համակարգի արդյունավետությունը բարձրագույն կրթության մատչելիության և հավասարության տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է այն առումով, որ ուսանողական նպաստի հատկացումն ուղղակի կախված է բուհական ընդունելության և կամ միասնական քննությունների արդյունքներից՝ ուսման առաջին տարում, և ուսանողների ընթացիկ առաջադիմությունից՝ ուսման հաջորդ տարիներին: Այն հաշվի չի առնում ուսանողների սոցիալական վիճակն ու ֆինանսական կարողությունները (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տարեկան ուսման վճարի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող որոշակի խմբերի): Այս մոտեցումը լուրջ խոչընդոտ է ստեղծում սոցիալապես անապահով խմբերի համար բարձրագույն կրթության մատչելիության տեսանկյունից և խիստ սահմանափակում է անապահով ընտանիքների երեխաների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը՝ առաջացնելով անհավասարության խնդիրներ:

Ուստի, ցանկալի է, որ ՀՀ և ԼՂՀ կառավարությունը վերանայի բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը՝ ներառյալ ուսանողական նպաստների հատկացման սկզբունքները և մեթոդները: Մասնագիտական չափաքանակները և դրանց բաշխումն ըստ բուհերի նույնպես վերանայման կարիք ունեն՝ համապատասխանեցնելով դրանք երկրի տնտեսության զարգացման առաջնային ոլորտներին և աշխատաշուկայի պահանջներին:

Այսպիսով, ելնելով վերն ասվածից, կարելի է նշել, որ այսօր անհրաժեշտություն կա մշակելու ուսանողական նպաստների և ուսման վարձերի որոշման կայուն մեթոդաբանություն՝ հաշվի առնելով տարբեր մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման առանձնահատկությունները և ծախսերի հաշվարկումը: Այս մեթոդաբանությունն իրական հիմքեր կստեղծի մասնագիտության արժեքի որոշման և գնագոյացման համար: Ուսանողական նպաստներ տրամադրելու սկզբունքները և չափանիշները պետք է նպաստեն բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործմանը: Դրանք պետք է համակցեն և սոցիալական գործոնները (ընտանիքի եկամուտը, սոցիալական խոցելիության աստիճանը և այլն) և ուսանողների առաջադիմությունը՝ աշխատաշուկայի պահանջների և երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից:

Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթության ֆինանսավորման ներկայիս համակարգը պետք է հաղթահարի հետևյալ հիմնախնդիրները.

- *բյուջետային միջոցների օգտագործման ցածր արդյունավետությունը, ինչը հիմնականում պայմանավորված է պետության կողմից բուհերին ըստ մասնագիտությունների տրվող չափաքանակների սահմանման և բաշխման գործընթացների, ինչպես նաև պետական կրթաթոշակների և ուսանողական նպաստների ձևավորման և հատկացման սկզբունքների անկատարությամբ,*
- *մասնագիտական կրթության հավաստի հասանելիություն ապահովելու համար ուսանողներին ֆինանսական աջակցություն նպաստավոր և արդյունավետ համակարգի բացակայությունը,*

- նորարարությունների խրախուսման, համալսարանների կողմից ռազմավարական ծրագրերի մշակման ու իրականացման համար պետական ֆինանսավորման բացակայությունը և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի նիստի թիվ 25 արձանագրային որոշման՝ նախատեսվում է բարեփոխել բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմները՝ նպատակ ունենալով մեծացնել բարձրագույն կրթության մատչելիությունը՝ Հայաստանում և Արցախում, սահմանել ճիշտ խթաններ և օրինաչափություններ, որոնք հնարավորություն կընձեռեն բուհերին՝ կատարելագործելու կրթության որակն ու համապատասխանությունը և առավել պատասխանատու դառնալու արդյունքների համար, ինչը կստարի մրցակցային, գիտելիքահենք տնտեսություն կառուցելուն [9]:

Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների երկրորդ փուլը, որը բնորոշ է որպես կայունացման ժամանակաշրջան (1995-1999), համեմատաբար տևական էր, քանի որ ուղղված էր կրթության ոլորտում նոր օրենսդրական դաշտի ստեղծմանը և բարելավմանը: Շրջափուլի տևականությունը պայմանավորված էր նրանով, որ կրթական դաշտի կարգավորմանն ուղղված օրենքների ընդունումը և կենսագործումը ինքնին տևական գործընթաց է, որը, բացի այդ, ենթակա է տարատեսակ հարափոփոխ գործոնների ազդեցությանը:

Հայտնի է, որ մինչև անկախացումը, Հայաստանի և Արցախի կրթական համակարգերը կանոնակարգվում էին միասնական կրթական քաղաքականության հայեցակարգերով: Շարունակում էր գործել դեռևս խորհրդային շրջանում ընդունված կարգերը, որոնք պետք է հիմք ծառայեն կրթական նոր համակարգի բարեփոխումների և հետագա զարգացման համար: Սակայն շատ շուտ պարզ դարձավ, որ դրանք չեն կարող բավարարել առկա իրավիճակին՝ արդեն իսկ հասարակական կյանքում տեղի ունեցած արագընթաց փոփոխությունների պատճառով և դրանց զգալի մասն այլևս կենսունակ չէն: Իրավիճակը շտկելու հիմնական միջոցը, որն ունակ էր որակապես լավացնելու կրթության ոլորտում առկա բացթողումները, նոր օրենսդրական դաշտի ստեղծումն էր և համապատասխան օրենքների ընդունումը:

Հայաստանի կրթական համակարգի բարեփոխումների իրականացման առաջին փուլում (1991-1995)՝ 1995 թվականին, ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, որի 35-րդ հոդվածով ամրագրվեց. «ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք» [10]: Այսուհետ Հայաստանում և Արցախում կրթությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ (ի դեպ, նշենք, որ ԼՂՀ Սահմանադրությունը ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին):

Հայաստանի անկախությունը հնարավոր դարձրեց ընդունելու օրենքներ, որոնք աստիճանաբար լրացնում էին իրավական դաշտի բացերը:

Հասարակության զարգացման համար կարևորագույն օրենքներից մեկը՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց 1999 թվականի ապրիլի 14-ին [11]: Օրենքը սահմանում էր կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթական համակարգի հիմնական կառուցվածքային տարրերը՝ կրթական ծրագրերը, դրանց նպատակներն ու իրականացման եղանակները, կրթության ձևերն ուսումնական հաստատությունների տիպերն ու կարգավիճակները,

կրթական համակարգի կառավարման բնագավառում տարբեր մարմինների իրավահավասարությունները, կրթական համակարգի տնտեսական հիմքերը, սոցիալական երաշխիքները: Միաժամանակ օրենքը բավարար հիմքեր ստեղծեց կրթական կառուցվածքային վերափոխումների համար:

Այսպիսով՝ Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջին և երկրորդ շրջափուլերում պետության իրականացված քաղաքականությունն ուղղված էր կրթության որակի, մատչելիության և արդյունավետության բարձրացմանը, օրենսդրական դաշտի կատարելագործմանը, ուշադրության կենտրոնում է եղել կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական: Խնդրի իրագործումը պետք է ապահովվեր համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով:

Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների երրորդ շրջափուլը կարելի է բնորոշել որպես կայացման ժամանակաշրջան (1999-2005թթ.): Այս շրջափուլն ուղղված է ուսման որակի բարձրացմանը և Հայաստանի կրթական համակարգի համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին, ինչպես նաև նպատակաուղղված է կրթության մատչելիության և շարունակականության ապահովմանը:

Բարձրագույն կրթության բարեփոխումների վերոնշյալ շրջափուլերում ՀՀ «Կրթության մասին» օրենքը և այլ օրենքները ու Կառավարության որոշումները հիմք հանդիսացան ԼՂՀ Ազգային ժողովի կողմից նույնպես ընդունելու «Կրթության մասին», ԼՂՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» նախնական մասնագիտական (արհեստագործական) և «Միջին մասնագիտական կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» և այլ օրենքներ ու կանոնակարգեր:

ԼՂՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ 2005թ. մայիսի 25-ին ԼՂՀ Ազգային ժողովն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» [12]:

Հիմք ընդունելով ՀՀ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի հիմնադրույթները՝ այս օրենքի առաջին բաժնում նշվում է, որ ԼՂՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունում իրականացվում է եռաստիճան՝ բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագիտական կրթական ծրագրեր և այդ հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն:

Այսպիսով՝ կրթության բարեփոխումների կայացման ժամանակահատվածում ԼՂՀ պետական բուհում (ԱրՊՀ) առաջին անգամ իրականացվում է բակալավրի և դիպլոմավորված կրթական ծրագրեր, ինչպես նաև հետբուհական ծրագրեր (մագիստրատուրա, հայցորդ, ասպիրանտուրա, հետազոտող):

Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի Հանրապետության «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքում նշվում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական խնդիրները՝

- *բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում որակի ապահովում,*

- *բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում և մրցունակության բարձրացում միջազգային ասպարեզում,*
- *բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի կատարելագործում,*
- *կրթության զարգացման ծրագրերի մշակում և իրականացում,*
- *պետության պահանջներից ելնելով՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ֆինանսավորում,*
- *գիտելիքների ստուգման կրեդիտային (չափանիշային) գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում,*
- *բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանների, ուսուցման ժամկետների ու ձևերի սահմանում և այլն:*

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, բարեփոխումների կայացման ժամանակահատվածում Հայաստանի և Արցախի կրթական համակարգում լուրջ առաջընթաց քայլերից է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման» 2001-2005թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը [13]: Ըստ այդմ՝ պետական և ազգային կարևորագույն խնդիր է ձևակերպվում կրթության համակարգի զարգացումը, որակի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության բարձրացումը:

Այսպիսով՝ վերոշարադրյալից ակնհայտ է, որ Հայաստանի և Արցախի օրենսդրական դաշտերի կատարելագործումը հնարավորություն ստեղծեց մի շարք բարեփոխումներ իրականացնել ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում: Եվ չնայած որոշ բացերին՝ օրենսդրական դաշտի բարելավումը բարենպաստ պայմաններ ստեղծեց նաև Հայաստանում և Արցախում Բոլոնյան գործընթացի ներմուծման և հետագա զարգացման համար:

Ըստ մեր դիտարկումների՝ Բոլոնիայի հիմնադիր հռչակագրի համաձայն՝ ԵԲԿՏ-ն պատկերացվում էր որպես մի տարածք, որը հնարավորություն է ընձեռվում բարձրագույն դպրոցի ուսանողներին, կրթության ոլորտի աշխատողներին անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրորակ բարձրագույն կրթության համար: Բուհերը և ուսանողները կարևոր դերակատարություն ունեն Բոլոնիայի գործընթացում, համապատասխանաբար կարևորվում է նրանց ներգրավումը տարբերակված և հարմարունակ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորման գործընթացում: Բոլոնիայի գործընթացն իր զորակցությունն է ցուցաբերում հարատև ուսումնառության գաղափարի ներդրմանը Եվրոպայում, ինչը կարևորվում է գլոբալ աշխատաշուկայում աճող մրցակցության մարտահրավերների դիմագրավմանը և կրթական տեխնոլոգիաների օգտագործմանը նպաստելու տեսանկյունից: Կարևորում ենք նաև նշել, որ այսօր բուհերը պետք է մշակեն դասընթացներ և կրթական ծրագրեր էական և ընդհանուր եվրոպական բովանդակությամբ՝ բարձրագույն կրթության եվրոպական չափայնությունն ուժեղացնելու նպատակով: Սա ենթադրում է նաև եվրոպական բուհերի միջև գործակցային կապերի ու համատեղ ծրագրային մշակումների խթանում, ինչպես նաև համատեղ որակավորումների հիմնում: Այդպիսի բաց տարածքի անկյունաքարերն էին հանդիսանում բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում:

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության, փաստագրական այլ նյութերի համակողմանի ուսումնասիրումն ու բո-

վանդակային վերլուծությունը, ստորև ներկայացնենք եզրակացություններն ու առաջարկությունները:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներ, անկախ դժվարություններից, իրականացվել են՝ ինչպես վերևում հիշատակվեց անցումային, կայացման և կայունացման շրջափուլերում: Ամփոփենք ըստ ժամանակահատվածի:

Հայաստանի և Արցախի կրթական համակարգը, նախկինում լինելով ԽՍՀՄ կրթական համակարգի մասը, ունեցել է մի շարք առավելություններ և թերություններ, ինչը բնորոշ էր այն ժամանակ խորհրդային միասնական հանրապետությունների կրթական համակարգին:

Առավելություններից կարելի է համարել այն, որ՝

- *ողջ կրթական համակարգը գործում էր պետության ֆինանսավորմամբ, ինչը բացառիկ երևույթ է.*
- *միջնակարգ կրթությունը պարտադիր էր, ինչը նույնպես բացառիկ ծեռքբերում էր, անգամ այսօր, շատ զարգացած երկրներում միջնակարգ կրթությունը պարտադիր չէ.*
- *կրթությունը ակադեմիական ուղղվածություն ուներ.*
- *ուսանողներին տրվում էին տարբերակված կրթաթոշակներ (սովորական, գերազանցիկների և անվանական կրթաթոշակներ բացարձակ գերազանցիկների համար).*
- *պետությունը անվճար հանրակացարաններ էր տրամադրում տարբեր վայրերից եկած բուհերում սովորող ուսանողներին և այլն:*

  Սակայն հարկ է նշել, որ, այս անառարկելի առավելություններով հանդերձ, առկա էին մի շարք բացասական կողմեր, որոնք պայմանավորված էին՝
- *պետության կողմից կրթության ֆինանսավորման մնացորդային մոտեցմամբ,*
- *կառավարման խիստ կենտրոնացմամբ,*
- *կրթության բովանդակության գաղափարայնացմամբ:*

Ինչպես արդեն նշել ենք, անկախության հաջորդած տարիներին բարձրագույն կրթության համակարգի առավել կարևոր բարեփոխումներից էր այն որոշումը, համաձայն որի՝ 90-ական թվականների կեսերից պետության կողմից բուհերին հատկացվող ֆինանսավորումը տրամադրվում էր որպես մեկ տողով գումար՝ ի տարբերություն նախկինում կիրառվող մանրամասնեցված բյուջեի, ինչպես և այն, որ բուհերին տրվող գործունեության լայն ազատություն (ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն):

Այս ընթացքում իրականացվել են նաև մի շարք օրենսդրական փոփոխություններ ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտներում: «Լեզվի մասին» օրենքում [14], որոնք հնարավորություն են ստեղծել նորովի մոտենալ բարձրագույն կրթությանը:

Հայաստանի անկախությունը հնարավոր դարձրեց ընդունելու նորանոր օրենքներ, որոնք աստիճանաբար լրացնում էին իրավական դաշտի բացերը: Նկատի ունենք 1999թ. ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունած «Կրթության մասին» օրենքը, որը սահմանում էր կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթական իրավունքի երաշխիքները, կրթական ծրագրերը, դրանց նպատակներն ու իրականացման եղանակները:

2004թ. ընդունված «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով բուհերին, այդ թվում՝ Արցախի (2005թ.), ամրագրվեց անկախ հաստատությունների կարգավիճակ՝ որպես պետական ոչ առևտրային կազմակերպություններ [15]:

Բոլոնիայի գործընթացից ու EGTS իրականացումից նոր ակնկալիքները հստակ ցուցահանեցին այն իրողությունը, որ ժամանակակից բուհերն իր բարդ համակարգով պահանջում է անխափան գործող տեղեկատվության կառավարման համակարգ (ՏԿՀ): Ընթացիկ շրջանում Հայաստանի և Արցախի բուհերը փորձում են կատարելագործել տեղեկատվության կառավարման համակարգերը, սակայն առանձին-առանձին նրանք սակավ միջոցներ ունեն տեղեկատվության կառավարման առաջադեմ համակարգ որդեգրելու ու զարգացնելու համար: Այս մասնատված ջանքերը ոչ միայն ավելացնում են բուհերի ծախսերը, այլ կարող են նաև հանգեցնել այնպիսի իրավիճակի, ուր տարբեր բուհերում կարող են ստեղծել անհամադրելի համակարգեր:

Ինչպես ցույց է տալիս հիմնախնդրի վերաբերյալ մեր կատարած վերլուծությունը, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթության համակարգերում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ, սակայն Հայաստանի և Արցախի բարձրագույն և հետբուհական ոլորտներում դեռևս մի շարք խնդիրներ գոյություն ունեն: Այդ իսկ պատճառով, հիմք ընդունելով մեր հետազոտության արդյունքների բովանդակային վերլուծությունները, առաջարկում ենք հետևյալ դրույթները.

1. Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության կառավարման խնդիրները դիտարկել Բոլոնիայի գործընթացի համատեքստում, որը 1999 թվականին սկիզբ առած Եվրոպայի բարձրագույն կրթության բարեփոխումների համապարփակ համակարգ է: Համաշխարհային բանկի կողմից անցկացված և 2008 թվականին հրապարակված «պետական ծախսերի ուսումնասիրության» մեջ նշվում է, որ «Հայաստանն առաջընթաց է արձանագրել Բոլոնիայի գործընթացի որոշ ասպեկտներում, սակայն դեռ զիջում է որակի ապահովման ու որակավորման տեսանկյունից»: Այս եզրակացությունը դեռևս ուժի մեջ է 2010 թվականից: Այն ի ցույց է հանում որակի ապահովման, ինչպես նաև կառավարման համակարգի բարելավումների անհրաժեշտությունը:

2. Կրեդիտային համակարգի ներդրմանը զուգընթաց անհրաժեշտ է վերափոխել նաև ուսանողների գնահատման և դրա հետ կապված որոշ ֆինանսական չափորոշիչների գործող համակարգերը: Այսպես, կրեդիտային համակարգով աշխատող բուհերի համար ավարտական փաստաթուղթը (օրինակ բակալավրի կամ մագիստրոսի դիպլոմը) տրվում է որոշակի առարկայական մոդուլների գծով կուտակված կրեդիտների անհրաժեշտ քանակի դեպքում: Դա նշանակում է, որ եթե ուսանողը չի հաղթահարում որևէ առարկայի գծով գնահատականի նվազագույն անհրաժեշտ շեմը, ապա իրեն հնարավորություն է տրվում շարունակելու ուսուցումը՝ հետագայում կրկնելով այդ առարկայական կուրսը և հավաքելով անհրաժեշտ կրեդիտային քանակը: Մինչդեռ գործող համակարգով ուսանողը նույնիսկ մեկ առարկայի դեպքում բացասական արդյունք ստանալու դեպքում հեռացվում է բուհից:

3. Արդի խնդիր է նաև կրեդիտների անհամադրելիությունը, որը խոչընդոտ է կրեդիտների փոխճանաչման և ուսանողների շարժունության համար: Այստեղ պետք է խիստ լինի ԿԳՆ-ի մոտեցումը, որ Հայաստանի և Արցախի բոլոր բուհերը մշակեն կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման ի-

րենց սեփական կարգերը, և որոնք կբխեն ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված օրինակելի կարգից, որն էլ կնպաստի կրեդիտների համադրելիության ապահովմանը:

4. Բուհերի միջև ստեղծել հավասար մրցակցային պայմաններ: Պետական և ոչ պետական բուհերը չտարբերակել և երկու դեպքում էլ անվճար ուսուցման հնարավորություն տալ, պետական կարգավիճակի դիպլոմ շնորհել և այլն:

Ներդնել բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմներ, մասնավորապես.

- *բարելավել ուսանողների ֆինանսական աջակցության համակարգը,*
- *բարեփոխել բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման համակարգը:*

Առաջարկում ենք նաև Հայաստանի և Արցախի բուհերում ստեղծել խորհրդատվական կենտրոն, որը կզբաղվի բուհի դասախոսական անձնակազմին և ուսանողներին՝ բարձրագույն կրթական համակարգում իրականացվող ներկայիս բարեփոխումների, Բոլոնիայի գործընթացի և կրեդիտային համակարգի վերաբերյալ անհրաժեշտ ինֆորմացիայի տրամադրմամբ: Կենտրոնի նպատակը կլինի հատուկ խորհրդատուների միջոցով բուհում մշտապես ապահովել գործընթացին վերաբերող ցանկացած հարցի մասին սպառիչ տեղեկատվություն: Խորհրդատվական կենտրոնի հիմնական գործառույթներից մեկը կլինի պատրաստել և իրականացնել ամենամյա սեմինարներ բուհ ընդունվող առաջին կուրսեցիների համար:

Բացի կազմակերպվելիք սեմինարներից՝ բուհում մշտական գործող կենտրոնը հնարավորություն կընձեռի բուհի յուրաքանչյուր ուսանողի ցանկացած պահի ստանալու իրեն հուզող հարցի պատասխանը: Կարծում ենք՝ խորհրդատվական կենտրոնի հիմնումը կնպաստի նաև կրեդիտային համակարգի վերաբերյալ բուհում առկա ապատեղեկատվության վերացմանը և կնպաստի Բոլոնիայի գործընթացի անխաթար իրագործմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա. Բոլոնիայի գործընթացը Հայաստանում /ուղեցույց/, «Անտարես» հր., Եր., 2008, էջ 37-38:
2. Աբրահամյան Հ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը /2000-2008 թթ./, Եր., 2013, էջ 226-227:
3. ՀՀ սոցիալական վիճակը 2003 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 14.03.2012:
4. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008 թթ., Ստեփանակերտ, 2009, էջ 52-54:
5. Արցախի պետական համալսարանի հաշվետվությունները, 2008-2014 թթ.:
6. Հայաստանի Ազգային մրցունակության զեկույց, 2010, էջ 64:
7. Հետազոտությունները կատարվել են՝ ԵՊՀ-ում, ՀՊՄՀ-ում և ԱրՊՀ-ում:
8. ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի նիստի թիվ 35 արձանագրային որոշում, հավելված 1:
9. ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, էջ 22:
10. ՀՀ Սահմանադրություն:

11. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 14 ապրիլի, 1999 թ.:
12. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենք, 25 մայիսի, 2005 թ.:
13. ՀՀ Կրթության զանգարցման 2001-2005 թթ. պետական ծրագիր, Եր., 2000:
14. «Լեզվի մասին» ՀՀ օրենք, 3 մարտի, 1993 թ.:
15. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 14 դեկտեմբերի, 2004 թ.:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ և ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգերի փոխակերպման գործընթացը կրթության ոլորտի բարեփոխումների համատեքստում

Լիլիյա Ասրյան

Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթության համակարգերը վերջին տարիներին ենթարկվել են մի շարք վերափոխումների՝ պայմանավորված Բոլոնիայի գործընթացին Հայաստանի անդամակցությամբ, որի նպատակն է ստեղծել միասնական կրթական և գիտական տարածք: Այդ վերափոխումները տեղի ունեցան երեք փուլով՝ 1991-1995 թթ., 1995-1999 թթ. և 1999-2005 թթ.: Հայաստանում և Արցախում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող վերափոխումների առաջին և երկրորդ շրջափուլերում պետական քաղաքականությունն ուղղված էր կրթության մատչելիությանը, որակի ապահովմանն ու օրենսդրական դաշտի կատարելագործմանը:

Երրորդ շրջափուլը կարելի է բնորոշել որպես կայացման ժամանակաշրջան, որն ուղղված է կրթության որակին ու շարունակականությանը և կրթության համակարգի համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին:

Բանալի բառեր՝ *բարձրագույն կրթություն, կրթության եվրոպական տարածք, փոխակերպում, կրթության որակ, օրենսդրական դաշտի կատարելագործում, կրթության շարունակականություն:*

РЕЗЮМЕ

Процесс трансформации систем высшего образования РА и НКР в контексте реформ образования

Лилия Асрян

Системы высшего образования Армении и Арцаха в последние годы потерпели ряд преобразований в связи с присоединением Армении к Болонскому процессу, целью которого является создание единого образовательного и научного пространства. Эти преобразования произошли в три этапа: 1991-1995 гг., 1995-1999 гг. и 1999-2005 гг. В период первого и второго этапов преобразования в сфере высшего образования в Армении и в Арцахе государственная политика была направлена на доступность образования, обеспечение качества и совершенствование законодательства.

Третий этап можно охарактеризовать как период устойчивого развития, направленный на обеспечение качества и продолжительности образования, а также на соответствие системы образования европейским стандартам.

Ключевые слова: *высшее образование, европейское образовательное пространство, трансформация, качество образования, совершенствование законодательства, продолжительность образования.*

SUMMARY

The Transformation Process of Higher Education Systems of the Republic of Armenia and Nagorno Karabakh in the Context of Education Reforms

Lilia Asryan

Higher education systems of the Republic of Armenia and Nagorno Karabakh have recently undergone a number of transformations, conditioned by the membership of Armenia to the Bologna process with the aim to form a united educational and scientific area. The mentioned transformations occurred in three stages: 1991-1995, 1995-1999, and 1999-2005. During the first and second cycles of transformations undergoing in higher education systems of Armenia and Karabakh the state policy was directed to the education accessibility, quality assurance, as well as to the enhancement of legislation.

The third cycle can be characterized as a period of sustainability, aimed at the assurance of education quality and lifelong learning as well as compliance of education system with the European standards.

Keywords: *higher education, European education area, transformation, education quality, enhancement of the legislation, compliance of education.*